

Լավությունն ան արա, ջոն իրը գցիր՝ մի օր արջուկ կգա:

ԲԱՐԵԳՈՐԾ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

BAREGORTS 2021, ապրիլ, № 1 (50) ԵԱՐԵԳՈՐԸ



ՀՀ Ազգային հերոս Լեոնիդ Ազգալոյանի պուրակի հուշարարը նրա իսկ կարգախոսով՝
«Մա Հայաստան է և վերջ»

ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻ ՀՈՒՆՆԱԿԱՆ 50-ՐԴ ՀԱՄԱՐԸ

Հայոց հնամենի Արցախ աշխարհը 1994 թ. ադրբեջանական գերությունից ազատագրումից հետո մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ կապող միջանցքի՝ Քաշաթաղի շրջանի հայ բնակչության սոցիալական կեցության ապահովման նպատակով հիմնադրվեց «Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» և կոչվեց 1992-1994 թթ. պատերազմում մեր հաղթանակը կոռած ու կոփած անձնվեր հայրողիներից մեկի՝ Արցախի ՊԲ հրամանատարի արտաքին կապերի և մատակարարման գծով տեղակալ պրոֆ. Գուրգեն Մելիքյանի անունով:

Հիմնադրամի գործունեության հետ միասին 1996 թվականից կանոնավոր պարբերականությամբ (տարեկան երեք-չորս համար) սկսեց լույս տեսնել «Բարեգործ» պաշտոնաթերթը, որը փաստորեն դարձավ նրա տարեգրությունը:

Ծանր ու լարված էին նորաստեղծ պետության գործունեության հատկապես առաջին տարիները. պատերազմից ավերված երկրի վերաշինում, ճանապարհների բարեկարգում ու ազատագրված բնակավայրերի վերաբնակեցում՝ ոմբահարումներից քանդված տների վերաշինումով ու նորերի կառուցումով, հանրակրթական ու երաժշտական դպրոցների, մանկապարտեզների նորոգում ու վերաբացում, ծառատունկով այգիների և պուրակների հիմնում, մեր հայրենիքի այդ չքնաղ հաստվածի վերաբնակեցում: Այդ սուրբ ու հայրենանվեր գործին իր համակողմանի մասնակցությունն է բերել նաև հիմնադրամը:

Բազում հոգսեր և նորոգ պետության նվազագույն հնարավորություններ... Այդ իրավիճակում հիմնադրամը չէր կարող որևէ ծրագիր իրականացնել առանց հայրենի և սփյուռքի բարեգործների օգնության, առանց հայրենասեր նվիրատուների անսակարկ աջակցության:

Հիմնադրամն ունեցավ իր հեղինակավոր հոգաբարձության խորհուրդն ու գործադիր տնօրինությունը, որոնք այսօր էլ աշխատում են նվիրումով ու բարձր պատասխանատվությամբ, ազնիվ բարեխղճությամբ: Հիմնադրամը բաց բանկա-

լին համակարգով հրապարակայնորեն գործելով՝ արագորեն նվաճեց նվիրատուների վստահությունը:

Անհրաժեշտ էր ստեղծել նաև մի պաշտոնաթերթ, որը կամուրջ դառնար հիմնադրամի և նվիրատու բարեգործների միջև, լուսաբաներ հիմնադրամի գործունեության բոլոր ոլորտները: Այս նպատակով էլ ստեղծվեց «Բարեգործ» թերթը, որի հիմնադիրը և առաջին մի քանի համարների խմբագիրը նշանավոր հրապարակախոս և գրող Բակուր Կարապետյանն էր: Հետագայում թերթն ունեցավ նոր խմբագրակազմ (գլխավոր խմբագիր՝ Բ.Գ.Գ., պրոֆ. Ս. Մուրադյան, խմբագրակազմ՝ Բ.Գ.Գ., պրոֆ. Ա. Ավագյան, Բ.Գ.Թ., պրոֆ. Գ. Մելիքյան, պ.Գ.Թ., պրոֆ. Ալ. Սաֆարյան), որն իր հրատարակած 50 համարներով էական դեր խաղաց հիմնադրամի հաջողություններում:

«Լավություն ան արա, ջո՛ւրը գցիր՝ մի օր առջև կգա» ժողովրդական խոսքն ունենալով նշանաբան՝ «Բարեգործ» պաշտոնաթերթն իր կայուն և փոփոխական բաժիններում ճշգրտորեն լուսաբանել է ամեն ինչ, թե՛ ամենամյա դրամահավաքն ու որպես օգնություն նվիրատվություններն է ներկայացրել առանձին ցուցակներով, թե՛ ծախսերը, որ յուրաքանչյուր բարեգործ տեսնի ու համոզվի իր նվիրած գումարն ինչ նպատակով է ծախսվել:

Այսպես, թերթում միշտ տեսանելի են եղել ստացված նվիրատվությունների և օգնությունների ցուցակները, վաղ գարնանն ու աշնանը ԵՊՀ ուսանողների միջոցով կազմակերպվող ամենամյա ծառատունկի մասին տեղեկություններ, Արցախի ու Ջավախքի կարիքավոր բազմազավակ ընտանիքներին տրվող օգնությունը, անվճարունակ ուսանողների, մանավանդ պատերազմի մասնակիցների, ծնողագուրկների ուսման վարձավճարների մասնակի կամ ամբողջական մուծումները, Քաշաթաղի շրջանի բազմազավակ ընտանիքներին տրվող ԽԵԱ «Կով» ծրագրի ցուցակները (արդեն տրվել է շուրջ 490 կով),

հիմնադրամի միջոցներով տպագրված հայագիտական և բազմաթիվ այլ արժեքավոր գրքերի տպագրությունը:

Պարբերաթերթը լուսաբանել է յոթ տարի անընդմեջ ամերիկահայ բարերարների նախաձեռնությամբ Շուշիում կազմակերպված համահայկական դպրոցական ասմունքի փառատոները, որոնց մասնակցել են Հայաստանի տարբեր և Արցախի բոլոր շրջաններից, ԱՄՆ-ից, Լիբանանից, Իրանից, Ջավախքից, Ուկրաինայից, Ռուսաստանի տարբեր քաղաքներից ժամանած հարյուրավոր հայ երեխաներ: Համավարակի և պատերազմի պատճառով յոթերորդը, ցավոք, վերջինը եղավ:

«Բարեգործն» իր էջերում տարբեր առիթներով անդրադարձել և լուսանկարներով պատկերել է նշանավոր բարերարներին, Արցախի հերոս ազատամարտիկներին, մեր պետականության 25-ամյակին, ԵՊՀ 90 և 100-ամյակներին, նշանավոր գրողների ու մշակութային գործիչների պատվին հիմնված այգիներն ու պուրակները:

«Բարեգործը» պարբերաբար անդրադարձել է նաև կրթական և մշակութային հաստատությունների, օգնություն ստացած ընտանիքների և առանձին անհատների նամակներին ու շնորհակալագրերին, որոնցով իրենց գոհունակությունն են հայտնել հիմնադրամի գործադիր տնօրենին ու հոգաբարձության խորհրդին:

Հայությունն այսօր ապրում է իր պատմության ծանրագույն ժամանակներից մեկը: Տեղի ունեցավ 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված 44-օրյա հայաստացի ահավոր պատերազմը: «Նավթի տակառ» Ադրբեջանը Թուրքիայի գլխավորությամբ, տնտեսական ու քաղաքական շահերով շողկապված մահմեդական ու քրիստոնյա մի շարք պետությունների աջակցությամբ, վարձկան ահաբեկիչներով, միջազգայնորեն արգելված արդիական տարատեսակ զենքերով ոչ միայն հարձակվեց Արցախի պաշտպանական դիրքերի, այլև խաղաղ բնակչության վրա:

Ցեղասպան նոր պատերազմը մեզ պատճառեց անչափելի մարդկային ու տարածքային կորուստներ: Հիմա ահռելի չափերով ավելացել են կարիքավորները,

անհապաղ օգնության կարոտ մեր հայրենակիցները: Տասնյակ հազարավոր զոհեր, հաշմանդամներ, անհետ կորածներ կան, թշնամու ավերած քաղաքացիական շենքերն ու տները, դպրոցներն ու մանկապարտեզները, հիվանդանոցներն ու ծննդատները հրատապ նորոգման անհրաժեշտություն ունեն, թշնամու վերահսկողությանն անցած տարածքներում իրենց տները կորցրածները, Արցախում մնացածները, Հայաստանում և այլուր ապաստանածներն ու զինադադարից հետո հայրենի տուն վերադարձողները հիմնադրամի առջև դրել և դնում են հրատապ լուծում պահանջող անհետաձգելի բազմաթիվ խնդիրներ:

Այս պարագայում աղետի ենթարկված մեր ազգակիցներին օգնելու, համազգային աղետի հետևանքները վերացնելու համար մեր հին ու նոր բարերարները պետք է ավելացնեն իրենց ջանքերն ու ներդրումները: Դարերի կենսափորձով համոզված ենք՝ բոլոր դժվարությունները կհաղթահարվեն միասնական ջանքերով, և, ինչպես Շահամիրյաններն էին հուսադրում, «միշտ էլ ցրտաշունչ ձմռանը հաջորդում է մանուշակաբեր գարունը»: Հուսադրենք «Բարեգործի» ընթերցողներին ու մեր ողջ ժողովրդին, որ անցել են հայակործան բոլոր դարերը, այս էլ կանցնի: Համբերություն, ողջամտություն, ուժ ու կորով մաղթենք միմյանց ու կատարենք մեր սուրբ պարտքը հայրենիքի ու ժողովրդի հանդեպ:

Հոբելյանական 50-րդ համարի լույսընծայման առթիվ, շնորհավորենք հիմնադրամին, նրա հին ու նոր բարեկամներին նրա պաշտոնաթերթ «Բարեգործի» գլխավոր խմբագրին ու խմբագրակազմին, հին ու նոր բարեգործներին, թերթի բոլոր ընթերցողներին՝ բոլորին մաղթելով երկարակեցություն և ամենայն բարիք:

Բարի երթ «Բարեգործ» պաշտոնաթերթին իր ապագա գործունեության մեջ, վերջին աղետից հետո համազգային ցանկալի հաջողություններ արձանագրելու, բոլորիս ընկճված սրտերը ուրախացնելու բազում պատեհություններ:

ԽՄԲԱԳԲԱԿԱԶՄ

ՀԱՅ ԵՐԳԱՐՎԵՍՏԻ ՊԱՅԾԱՆՈՒ ՕՐ

(Խորեն Պալյանի ծննդյան հերթական տարեդարձը)



Մարտի 10-ը իրոք որ լուսավոր ու պայծառ օր էր:

«Լուսինե Չաքարյան - Խորեն Պալյան» տուն-թանգարանում՝ Խորեն Պալյանի տանը, հավաքվել էին Խորենի և Լուսինեի ընկերներն ու բարեկամները, մտերիմներն ու պարզապես հայ երգարվեստի երկրպագուները՝ նշելու Խորեն Պալյանի ծննդյան օրը: Եվ անշուշտ, ներկա էին թանգարանի հոգաբարձուների խորհրդի անդամները՝ արևելագետ Գուրգեն Մելիքյանը, գրականագետներ Արծրուն Ավագյանը, Սամվել Մուրադյանը, Երվանդ Տեր-Խաչատրյանը:

Օրն սկսվեց հեռուներից եկող, բայց ամենքի սրտին մոտիկ Խորեն Պալյանի ձայնով ու երգով: Խորենի երգը՝ «Կիլիկիա (Այգուն, այգուն)», միանգամից փոխեց մթնոլորտը, օդը լցրեց հայ դասական երգի խորհրդավոր գեղեցկությամբ: Երգից անմիջապես հետո ցուցադրվեց տասնութ թույլ տևողությամբ տեսաֆիլմ, որ ներկայացնում էր Խորենի խոսքը և մի հատված նրա հետ եղած մի հարցազրույցից: Խորենի սահուն, գեղեցիկ բնական ու անկաշկանդ խոսքը կարծես իր երգի շարունակությունը լիներ: Այդպես կարող է խոսել միայն շատ կիրթ ու գրագետ մտավորականը, որպիսին Խորեն Պալյանն էր:

Օրվա արարողությունը իր խոսքով բացեց թանգարանի տնօրեն Մուսաննա Դավթյանը: Նա ներկաներին ծանոթացրեց թանգարանի ընթացիկ աշխատանքներին, ինչպես նաև առաջիկա ծրագրերին ու ձեռնարկումներին, ուրախությամբ տեղեկացրեց, որ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» աջակցությամբ սահմանվել են «Լուսինե Չաքարյան», «Լուսինե Չաքարյան և Խորեն Պալյան» ու

«Խորեն Պալյան» անվանական կրթաթոշակներ. Առաջինը՝ Երևանի պետական կոնսերվատորիայի, երկրորդը՝ Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական ուսումնարանի, երրորդը՝ Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողների համար:

Մեր իրականության մեջ Խորեն Պալյանի և Լուսինե Չաքարյանի երգարվեստի բացառիկ նշանակության մասին հանգամանալից խոսք ասաց Երվանդ Տեր-Խաչատրյանը: Նա հատկապես շեշտեց Խորեն Պալյանի անձի ու նկարագրի կարևորությունը մեր ժողովրդի համար, նրա՝ հայ տոհմիկ երգի զուլալ մեղեդիները ժողովրդին էլ ավելի ճանաչելի դարձնելու անփոխարինելի վաստակը:

Անվանական թոշակառու պատանի երաժիշտները իրենց ջերմ մասնակցությունը բերեցին օրվա հանդիսությանը: Երևանի Կոմիտասի անվան պետական երաժշտանոցի ուսանողուհի, «Լուսինե Չաքարյան» անվանական թոշակառու Լիլիթ Դավթյանը երգեց «Մայր և կույս» շարականը: Երգեցին նաև Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական ուսումնարանի ուսանողուհիներ «Լուսինե Չաքարյան և Խորեն Պալյան» անվանական կրթաթոշակառուներ Մարիամ Տերտերյանը և Օլսաննա Խոջոյանը. առաջինը՝ «Ո՛ւ՛ր ես, մա՛ր իմ» շարականը, երկրորդը՝ Կոմիտասի «Օրորը»:

Երգիչներ Արման Նիկոյանը և Արտակ Ստեփանյանը, դաշնակահար Լևոն Հարությունյանի նվագակցությամբ, մի առանձնակի շուք տվեցին հանդիսությանը: Երգիչ Արսեն Համբարյանը երգեց «Մոկաց Միրզա» և պատմեց, թե ինչ խորհուրդներ է տվել իրեն Խորեն Պալյանը երգը ճիշտ կատարելու, ճիշտ մեկնաբանելու համար:

Հերթը եկավ ջերմ ու անմիջական հուշերին: Իրենց հուշերը պատմեցին ռեժիսոր Սամվել Միքայելյանը, Ի. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, աստվածաբան, իր ուսանողությանը Խորեն Պալյանին աշակերտած Նելլի Պետրոսյանը, Էջմիածնի Սբ. Շողակաթ եկեղեցու վանական Տեր Մամբրեն:

Հանդիպումը ամփոփեց հոգաբարձուների խորհրդի անդամ Արծրուն Ավագյանը: Նա բոլոր ներկաների անունից շնորհակալություն հայտնեց Խորեն Պալյանի եղբորորդուն՝ դոկտոր Բաֆֆի Պալյանին, որի ջանքերով ու նյութական միջոցներով Խորեն Պալյանի և Լուսինե Չաքարյանի բնակարանը մեծ դժվարություն-

ներ հաղթահարելուց հետո վերածվեց արժանավոր ու գործող թանգարանի: Ավագյանը շեշտեց նաև այն օգտաշատ գործունեությունը, որ Երևան քաղաքի այս գողտրիկ անկյուններից մեկի կայացման գործում ցուցաբերել է Գուրգեն Մելիքյանը:

Հանդիսությանը ներկա էր ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային ժառանգության վարչության պետ տիկին Աստղիկ Մարաբյանը: Օրվա հանդիսավոր մասի ավարտից հետո ներկաները մտերմիկ շրջանակում շարունակեցին իրենց ջերմ հուշերն ու գրույցները: Պատմությունները հաջորդում էին մեկը մյուսին: Խորենն ու Լուսինեն ոգեկան ներկայություն էին դարձել իրենց տանը: Մի պահ այն

տպավորությունն էր, թե հիմա հարևան սենյակի դուռը կբացվի և տան տերերը ներս կմտնեն:

Խորեն Պալյանի ծննդյան հերթական օրը վերածվեց բացառիկ մարդու, մեծատաղանդ անհատի անկեղծ ոգեկոչումի և հայ երգարվեստի բարեբանության օրվա:

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»

2021թ. ՎՃԱՐՎԱԾ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐ

Յ/հ	Ամսաթիվ	ԲՈՒՅ	Նպատակ	Գումար
1	18.01.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն ֆարմացիա 4-րդ կուրս	30000
2	18.01.21	ԵՊՀ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
3	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Կիրակոսյան Յուրիկ, իրավագիտ. 4-րդ կուրս	100000
4	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Մխիթարյան Խաչատուր, թյուրքագիտ. պատմ. մագիստր. 1-ին կուրս	50000
5	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Վարդանյան Արսեն, թյուրքագիտ. 3-րդ կուրս	50000
6	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Սայադյան Սերոբ, միջազգ. հարաբ. 5-րդ կուրս հեռակա	100000
7	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Բադալյան Դավիթ, իրան. պատմ. մագիստր. 2-րդ կուրս	100000
8	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Եղիազարյան Սամվել, տնտես. և կառավարում մագիստր. 1-ին կուրս հեռակա	150000
9	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Մաջիդ Վալիօլլահ Զարիմի, իրանագիտ. ասպիրանտ	250000
10	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Հակոբյան Հասմիկ, հայ բանասիր. 2-րդ կուրս	100000
11	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Մուրադյան Անուշ, թյուրքագիտ. 2-րդ կուրս	100000
12	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Գրիգորյան Մարիամ, ժուռնալիստիկա, մագիստր. 2-րդ կուրս հեռակա	100000
13	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Սողոմոնյան Անահիտ, ԵԼՀ 1-ին կուրս	100000
14	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն ֆարմացիա 4-րդ կուրս	30000
15	15.02.21	ԵՊՀ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000

16	15.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. կրթաթոշակ, Եգանյան Տիգրան, քիմիա մագիստր. 1-ին կուրս	30000
17	16.02.21	Մեսրոպ Մաշտոց համալսարան	Բաղայան Ռոբերտ, իրավագիտ. մագիստր. 2-րդ կուրս հեռակա	100000
18	16.02.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Սողոմոնյան Մարիամ, բուժֆակ. 2-րդ կուրս	100000
19	16.02.21	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Ոսկանյան Լուսինե, դիզայն 1-ին կուրս	200000
20	16.02.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Ղազարյան Մոնիկա, ատամնաբուժ. 3-րդ կուրս	150000
21	26.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Բարսեղյան Վահագն, արաբագիտ. 4-րդ կուրս, մարտ. հերթ. ապրիլ.	120000
22	26.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Բիջոյան Գեղամ, արաբագիտ. 4-րդ կուրս, մարտ. հերթ. ապրիլ.	120000
23	26.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Սարգսյան Նարեկ, արաբագիտ. 4-րդ կուրս, մարտ. հերթ.	120000
24	26.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Սիերյան Դավիթ, արաբագիտ. 4-րդ կուրս, ապրիլյան պատ. մասնակից	120000
25	26.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Ղազարյան Կառլեն, արաբագիտ. 4-րդ կուրս	80000
26	26.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Սարգսյան Էրիկ, արաբագիտ. 4-րդ կուրս	80000
27	26.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Ղարազյոզյան Լիլիթ, թյուրքագիտ. 1-ին կուրս	100000
28	26.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Ղարազյոզյան Լուսինե, մարդ. ռեսուրս.կառավարում մագիստր. 1-ին կուրս	100000
29	26.02.21	ԵՊՅ հիմնադրամ	Թորոսյան Դիանա, սոց. աշխատանք, 4-րդ կուրս	100000
30	26.02.21	ՀԱՀ	Սարգսյան Իոաննիս-Սարանդուս, անգլերեն հաղորդ. 3-րդ կուրս	150000
31	26.02.21	ԵՊԼՀ հիմնադրամ	Մանասյան Լիանա, թարգմ. և միջմշակ. հաղորդ.2-րդ կուրս /Չավախք/	100000
32	26.02.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Գաբրիելյան Չարուհի, կլին. օրդինատ. 1-ին կուրս, ընդհ. ստոմ. /Չավախք/	100000
33	26.02.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Մկոյան Օյա, ընդհ. բժշկություն 3-րդ կուրս /Չավախք/	100000
34	15.03.21	Գրիգոր Նարեկացի Համալսարան	Ենգիբարյան Տաթևիկ, ՏՄԿԿ 3-րդ կուրս, Զաշաթաղ, բացառություն	100000
35	23.03.21	ԵՊՅ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն ֆարմացիա 4-րդ կուրս	30000
36	23.03.21	ԵՊՅ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
37	02.04.21	ԵՊԼՀ հիմնադրամ	Մելքոնյան Մերի Ազատի, ԹՄՀ թարգմանչական գործ 2-րդ կուրս	50000

38	06.04.21	Ռ. Մելիքյանի անվ. պետ.երաժշտ. քոլեջ	Լ. Չաքարյանի և Խ. Պալյանի անվ. կրթաթոշակ, Խոջոյան Օվսաննա, վոկալ 4-րդ կուրս	10000
39	06.04.21	Ռ. Մելիքյանի անվ. պետ.երաժշտ. քոլեջ	Լ. Չաքարյանի և Խ. Պալյանի անվ. կրթաթոշակ, Տերտերյան Մարիամ, վոկալ 4-րդ կուրս	10000
40	06.04.21	Կոմիտասի անվ. պետ. կոնսերվատորիա	Լ. Չաքարյանի անվ. կրթաթոշակ, Դավթյան Լիլիթ, դաշնամուր և վոկալ մագիստր. 1-ին կուրս	10000
41	06.04.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարյանի անվ. կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն ֆարմացիա 4-րդ կուրս	30000
42	06.04.21	ԵՊՀ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
43	06.04.21	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարյանի անվ. կրթաթոշակ, Եգանյան Տիգրան, քիմիա մագիստր. 1-ին կուրս	30000
44	09.04.21	ԵՊԲՀ հիմնադրամ	Սիմոնյան Սարկիս, ստոմատոլոգիա 1-ին կուրս	100000
45	12.04.21	ԵՊՀ հիմնադրամ	Մանվելյան Գրիգոր, թյուրքագիտ. 4-րդ կուրս /պատերազմի մասնակից/	150000

3870000

ՔԱՂՎԱԾՔ

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի
2021 թ. մարտի 11-ի թիվ 5 նիստի արձանագրությունից
Նիստը վարում էր Ռ. Բարխուդարյանը:
Նիստին մասնակցում էին գիտական խորհրդի 88 անդամներից 79-ը:

ԼՍԵՑԻՆ.- 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ. - «Դ-ր Նազելի Չարյանի անվան» մեկ կրթաթոշակ (30 000 ՀՀ դրամ») հատկացնել քիմիայի ֆակուլտետի մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանող Տիգրան Հայկի Եգանյանին:

Գիտական խորհրդի նիստի նախագահող՝ (ստորագրություն) Ռ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
Գիտքարտուղար՝ (ստորագրություն) Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՔԱՂՎԱԾՔ

Երևանի պետական համալսարանի ռեկտորատի՝

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
19.03.2021 № 49/1 ՀՐԱՄԱՆԻՑ

Հիմք ընդունելով Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի 2017 թ. հուլիսի 6-ի նիստում հաստատված «Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստերի և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 34-36-րդ կետերը և ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2021 թ. մարտի 11-ի նիստի 5/4 որոշմամբ՝

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝

Ներքոհիշյալ ֆակուլտետների՝ գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին 2020 թ. մարտի 1-ից նշանակել անվանական կրթաթոշակ՝

1. **Նազելի Չարյանի անվան** – 30 000 ՀՀ դրամ (դրսի ֆինանսավորում)
Եգանյան Տիգրան Հայկի- քիմիայի ֆակուլտետ, քիմիա մասնագիտությամբ, մագիստրատուրա 1-ին կուրս:
2. **Նազելի Չարյանի անվան** – 30 000 ՀՀ դրամ (դրսի ֆինանսավորում)
Իսրայելյան Ռուբեն Էդուարդի- ֆարմացիայի ինստիտուտ, 4-րդ կուրս
Ստեփան Ալաջաջյանի անվան – 30 000 ՀՀ դրամ (դրսի ֆինանսավորում)
Բարսեղյան Վարդուհի Արտաշեսի – հայ բանասիրության ֆակուլտետ, 4-րդ կուրս
Խորեն Պալանյանի անվան – 30 000 ՀՀ դրամ (Տրվելու է հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողի):

ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ (ստորագրություն) Ռ. ԲԱՐԻՈՒԴԱՐՅԱՆ

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԻՔԻ

Բարձր առաջադիմության, հանրային եռանդուն գործունեության ու տպագիր նյութերի համար ես արդեն երկրորդ ուսումնական տարին է, որ ստանում եմ հայ ականավոր գրող Ստեփան Ալաջաջյանի անվան կրթաթոշակ: Այդ գումարը բացառապես ծառայեցնում եմ կրթական նպատակների՝ գնելով մասնագիտական և գեղարվեստական անհրաժեշտ գրքեր, մասնակցելով ուսումնական դասընթացների, կրթական ու գիտական միջոցառումների:

Թեև նախորդ տարին մեզ համար շատ ծանր էր ու ողբերգական, սակայն այդ շրջանում վերընթերցեցի Ստեփան Ալաջաջյանի «Եղեգները չիտնարիվեցին» վեպը: Երկրորդ անգամ վերընթերցելը՝ այն էլ պատերազմի օրերին, կրկնապատկեց

հայրենիքի հանդեպ սերս, պարտքի զգացում: Հասկացա, որ հայրենիքը լոկ աշխարհագրական հասկացություն կամ բնակավայր չէ: Այն իմ ընտանիքն է, տունը, դպրոցը, համալսարանը, այն ամենը, որ հայրենի եզերք է կոչվում, ուր մեր նախնիները ստեղծել են մեր քաղաքներն ու շենքերը, կառուցել ու քանդակել եկեղեցիներն ու խաչքարերը...

Հայրենիքն իմ լեզուն է ու կրոնը: Ազգային այդ բարձրագույն արժեքները պահպանելը առաքելություն է, որի մասին էլ խոսում ու գրում է Ստ. Ալաջաջյանն իր իմաստավոր վեպերում ու պատմվածքներում:

Ահա իմ ձեռքին է գրողի «Չսպիացած վերք» վեպի վերատպված եռահատորը, որի հրատարա-

կությունը հովանավորել է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաջաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը»: Գիտեմ, որ այս հիմնադրամն իրականացրած բարեգործական ծրագրերի հետ միասին բազմաթիվ այլ գրքեր էլ է հովանավորել, բայց ցանկանում եմ ընդգծել, որ եռահատոր այս գիրքը բացառիկ այն հրապարակումներից է, որ ամեն մի հայ պետք է ընթերցի՝ ճանաչելու համար ոչ միայն պատմական այն իրադարձությունները, որ կատարվել են 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում, այլև այն դաժան մարդակերությունը, որ իրականացրել են թուրք իշխանությունները, և այն հանցակցությունը, որ դրսևորել են «քաղաքակիրթ» եվրոպացիներն ու մանավանդ գերմանացիները:

Օգտվելով առիթից՝ ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել տիկին Ալաջաջյանին, քանի որ ինչպես նյութական օժանդակությամբ, այնպես էլ ալաջաջյանական գաղափարադրություններով ես ինձ ավելի հայ եմ զգում, գիտակցում, որ անելիքներ ու պարտավորություններ ունեմ իմ երկրի ու ժողովրդի հանդեպ:

Ստեփան Ալաջաջյանի հայրենանվեր գործը, գաղափարներն ու պատգամները դեռ շատ սերունդներ պիտի կրթեն ու ապրեցնեն, քանի որ Հայաստան աշխարհի ու հայ մարդու համար ալաջաջյանական գրականությունը չափանիշն է այն ամենի, ինչը բարձր է ու վեհ, ինչը հայեցի է:

Գեղարվեստական գրականությունը, մանավանդ հայ պատկերավոր խոսքը, հատկապես կարևոր է դառնում մեր օրերում, երբ շատ բան «դուրս է սայթաքել իր հունից»: Իսկ Ալաջաջյանի գրականությունը կրկին հաստատումն է այն համազգային ձեռքբերումների, որոնց կյանք են տվել մեր նահատակ հերոս նախնիները:

Հ. Գ. Վերջերս իմացա, որ Դուք՝ տիկին Ալաջաջյան, հոգ եք տանում Ստ. Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» վեպը անգլերեն թարգմանելու ուղղությամբ: Հավատացած եմ, որ բարու հաղթանակին հավատ ընծայող օտար ընթերցողը այս վեպն անպայման կհավանի, քանի որ այն ծանրակշիռ ու համոզիչ խոսք է մեծատառով Մարդու՝ չարը դատապարտող անհողողող կամքի մասին: Տա Աստված, որ Ձեր ձեռնարկումը շուտով իրականություն դառնա, ու Դուք անգլերեն տպագրեք նաև Ստ. Ալաջաջյանի «Չսպիացած վերք» վեպը:

ՎԱՐԴՈՒՀԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ
+37441668396, varduhy.barseghyan@gmail.com

Միասին ավելի ուժեղ ենք:

ՋԱՀ
“Չավախքին աջակցություն” հիմնադրամ

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ա Գ Ի Ր

ՏՐՎՈՒՄ Է

**«Գուրգեն Մելիքյանի՝ Քաջաթաղի բազմազավակ
ընտանիքների հիմնադրամին»**

Չավախքի ուսանողությանը մշտապես աջակցելու, նրանց որակյալ կրթությանը, մասնագիտական գիտելիքների աճին նպաստելու և արդյունավետ համագործակցության համար:

**“Չավախքին աջակցություն” հիմնադրամի
գործադիր տնօրեն՝ Մամվել Մկոյան (ստորագրություն, կնիք)**

ԵՐԵՎԱՆ _2021

«ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՅ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ...»



Լուսինե Չաքարյանի հետ միասին հայ հոգևոր երգը բեմ հանեց ու զարգացրեց մեր ազգային երգամտածողությունն ու կատարողական արվեստը: ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում իր իսկ հիմնած «Հայ տոհմիկ երգչախմբի» հետ հաճախակի այցելություններով ու կատարումներով նա կոմիտասյան մեղեդիներով ու հայ ժողովրդական երգով օժեց նոր ազատագրված Արցախի բոլոր վանքերն ու երաժշտական դպրոցները: Գիտեն նաև դոկտոր Բաֆֆի Պալանյանին, որ Կալիֆոռնիայում մեր հավատարիմ աջակիցն է և ամեն ինչով նպաստում է մեր հիմնադրամի մշակութային ձեռնարկումներին...

Ընթերցողը գոնե հետմահու թող իմանա նաև նրանց հարազատ Արտաշես Պալանյանին, որ ծնվել էր 1930 թ. Լիբանանում և վախճանվեց ս/թ հունվարի 31-ին ԱՄՆ-ում: 1946 թ. մեծ ներգաղթին ընտանիքով տեղափոխվել էր Հայաստան՝ Գյումրի, բայց հայրենիքից ու 1981-ից հաստատվել ԱՄՆ-ում:

Բարի հիշատակի արժանի ամեն հեռացող ցավ ու տրտմություն է պատճառում ոչ միայն անմիջական հարազատներին...

Իսկ եթե հանգուցյալը հանրային մարդ է ազգային մտածողությամբ ու բարի նկարագրով՝ առավել ևս: Մոտիկ ու հեռավոր հարազատների շատ ծանր կորուստներ բոլորս ունեցանք վերջերս: Այսօր հասել ենք մի իրավիճակի, երբ մահը դարձել է այքան սովորական, որ բոլորիս պատել է մի անբացատրելի անտարբերություն:

Մեր հայրենիքի տարածքների, հազարավոր երիտասարդ զինվորների կորստին, հաշմվածների, անհետ կորածների ու անողորմ թշնամուն գերի ընկածների վշտին, թագախտ-կովիդի պատճառած բազում մահերին ավելացավ ևս մի կակիծ: Հեռավոր Ամերիկայից ստացանք արժանավոր հայորդի Արտաշես Հարությունի Պալանյանի մահվան գույժը:

Պալանյանները մեր հիմնադրամի հնագույն ու հավատարիմ բարեկամներն են: Հայաստանում և Սփյուռքում բոլորը գիտեն երջանկահիշատակ Խորեն Պալանյանին, որը 1960-ական թվականներից հանրաճանաչ

Հեռավորությունը, սակայն, բնավ չէր խանգարում, որ բարեպաշտ այդ հայորդին ապրեր հոգեպես ապրեր հայրենիքի հաջողություններով: Համեստ, բանիմաց ու խոհեմ անձնավորություն էր նա՝ սիրված ու հարգված հարազատների ու ծանոթների միջավայրում: Հայոց հոգևոր երգերի՝ մասնավորապես շարականների հմուտ գիտակ էր և կրտսեր եղբոր՝ Խորենի հետ միասին հաճախ էր մասնակցում պատարագների և երգում հոգեզմայլ շարականներ: Ողջության օրոք Արտաշես Պալանյանը նույնպես ոչինչ չի խնայել մեր հիմնադրամի ծրագրերի իրականացման և Արցախի Քաշաթաղի շրջանի կարիքավորներին օժանդակելու համար: Վարձքդ կատար:

Հավիտենական հանգիստ արդար հայորդուն աստվածային լույսերի մեջ, և մխիթարությո՛ւն ապրող հարազատներին ու բոլորիս:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՉԸ

Միրելի՛ հայրենակիցներ,

Ժամանակներն ու հանգամանքները փոխվել են: Ադրբեջանա-թրքական վայրենի ուժը՝ համալրված տարբեր պետություններից շուրջ 7 հազար արյունարբու վարձկաններով, 44-օրյա պատերազմում ամենարդիական զենքերով հիմն ի վեր ավերել է մեր հայրենի տունը՝ սրբազան Արցախը, բռնազավթել նրա անվտանգության գոտու յոթ շրջանները, գրավել Շուշին ու Հադրութը: Հազարավոր զոհերից ու հաշմված երիտասարդներից բացի՝ ունենք նաև բազմաթիվ հայրենագուրկ անտուններ: Այսօր առավել, քան երբևէ, Արցախը մեր անհապաղ օժանդակության կարիքն ունի: Մեր հինավուրց հողը պահպանելու միակ ճանապարհն է օգնել մեր քաջ քույրերին և եղբայրներին, ովքեր վերջին արհավիրքի օրերին սաստիկ տուժեցին ցեղասպանության նպատակով սանձազերծված ահաբեկչական պատերազմում:

Հայրենապաշտպան շատ ընտանիքներ հերոսաբար անսասան մնացին իրենց հայրենի ակութներում, և շատերն էլ ստիպված էին ժամանակավորապես լքել իրենց տները, բայց զինադադարից հետո վերադարձան բզկտված Արցախ՝ քաջաբար պահպանելու մեր հայրենիքի սահմանները:

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» շարունակում է Արցախի սահմանային գյուղերում վերաբնակեցված բազմազավակ կարիքավոր ընտանիքներին օգնելու ծրագրված առաքելությունը:

Մեր հիմնադրամը և նրա գործունեությունը ճանաչող ու նրա հետ հույսեր կապող բազմաթիվ տուժածներն այսօր առավել շատ ունեն ձեր աջակցության կարիքը:

Ուրեմն՝ սատար կանգնենք արհավիրք տեսած ու նեղության մեջ հայտնված մեր քաջարի հայրենակիցներին, ովքեր վճռաբար որոշել են մնալ ու վերանորոգել իրենց ավերված տները, բնակվել հայաշունչ Արցախում, որպեսզի այնտեղ շարունակվի հայ կյանքը, պաշտպանվի և ամրանա մեր նվիրական հայրենիքը, մեր հինավուրց Արցախը, որի պաշտպանության համար հազարավոր երիտասարդներ զոհաբերեցին իրենց մատաղ կյանքը:

Միրելի՛ հայրենակիցներ, չզլանանք մեր սուրբ պարտքը. Արցախը մեզ է սպասում:

Օգնե՛նք հայ ընտանիքներին՝ ամրանալու հայոց հողում և շենացնելով դաճնելու հավերժող հայրենիք:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի բարեկամներին, «Բարեգործ» թերթի ընթերցողներին տեղեկացնում ենք, որ նվիրատվություններ կարելի է ուղարկել հիմնադրամի հետևյալ հաշվեհամարներով՝

Beneficiary bank: Ardashinbank CJSC, street G. Lusavorich 13, Yerevan, Armenia

Swift Code: ASHBAM22

Beneficiary: G. Melikian found of the family of multichild of the Kashatagh

Հաշվի համար (ՀՀ դրամ)՝ 2475704668770000

(Եվրո) 2475704668770010

(ԱՄՆ դոլար) 2475704668770020

CORR Bank

USD: Citibank NA New York Swift: CITIUS33 ACC.36209105

EUR: Commerzbank Swift: AG DRESDEFF ACC 499/0800065700/888

RUR: SBERBANK ROSSII; Moscow Swift: SABRRUMM 012

БИК: 044525225 К/С 30101810400000000225

ACC: 30111810600000000435

ԳԼԽԱՎՈՐ ԽՏԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ - քան. գլխ. դոկտոր, պրոֆեսոր

ԽՏԲԱԳՐԱԿԱԶՄ

ԱՎԱԳՅԱՆ Ա., ք. գ. դ., պրոֆեսոր

ՄԵԼԻՔՅԱՆ Գ., ք. գ. թ., պրոֆեսոր

ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ., պ. գ. թ., պրոֆեսոր

Շարվածքը և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի:

Տպաքանակը՝ 99: Թերթը բաժանվում է անվճար:

Հասցեն՝ Երևան 0025, Արովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սեն.: Հեռ.՝ 060 710 629, 055 -52- 29-36, 55 – 25 – 37,

